ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. նոյեմբերի 18-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **10.11.2022թ-ի «Փյունիկ-1-10»-«Միկա-10» (13Մ3-028) խաղի ժամանակահատվածում «Միկա-10» թիմի ֆուտբոլիստ Ալեքս Ռուստամի Սահակյանի (42783) կողմից ոչ խաղային դրվագում մրցակցի հանդեպ բռնարարկ կատարելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Միկա-10» թիմի ֆուտբոլիստ Ալեքս Ռուստամի Սահակյանի (42783) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով

Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Միկա-10» թիմի ֆուտբոլիստ Ալեքս Ռուստամի Սահակյանին (42783) որակազրկել 4 խաղով և «ՍԱ Միկա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։

2. **13.11.2022թ-ի «ԱՖԴ-07»-«Արտաշատ-07» (16C1-023) խաղի ժամանակահատվածում «ԱՖԴ-07» թիմի ֆուտբոլիստ Գառնիկ Էդուարդի Սարգսյանի (35224) կողմից մրցակցի հասցեին հայհոյանքներ թուլ տալու վերաբերյալ։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԱՖԴ-07» թիմի ֆուտբոլիստ Գառնիկ Էդուարդի Սարգսյանի (35224) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «ԱՖԴ-07» թիմի ֆուտբոլիստ Գառնիկ Էդուարդի Սարգսյանին (35224) որակազրկել 2 խաղով և Արթիկի ֆուտբոլի մարզադպրոցին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։

3. **13.11.2022թ-ի «Շիրակ-06»-«Ուարտու-05» (18A-030) խաղը 30 րոպե ուշ սկսելու վերաբերյալ (հանդերձարանն ուշ տրամադրելու պատճառով)։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» ՖԱ կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։